ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՇԱԽՄԱՏԸ ԵՎ ԻՆՏՈՒԻՑԻԱՆ

Շախմատային մտքի պատմության մեջ մենք հանդիպում ենք բազմաթիվ դեպքերի, երբ ինտուիցիային հատկացվում է առանձնահատուկ տեղ շախմատային ստեղծագործությունում։ Շատ նշանավոր շախմատիստներ ինտուիցիան համարել են շախմատային հաղթանակին հասնելու կարևորագույն միջոց։ Աշխարհի նախկին չեմպիոն Լասկերին են պատկանում այն խոսքերը, թե «մենք սովորել ենք մեծ հանճարներին պատկերացնել ինտուիցիայով օժտված...»[1]

Մեկ այլ առթիվ, քննարկելով Մորֆիի պարտիաներից մեկը, Լասկերը գրում է. «Մորֆին այլևս չի վերլուծում, մնացածը ինտուիցիայի գործն է»[2]*։ Խոսքը վերաբերում է ոչ միայն անցյալի շախմատիստներին։ Գրոսմայստեր Սուետինը կատեգորիկ կերպով հայտարարում է. «Շախմատիստի ստեղծագործությունը մեծ մասամբ ինտուիտիվ է»*[3]*։ Բազմաթիվ են այն դեպքերը, երբ շախմատիստը կամ շախմատային տեսաբանը, վերլուծելով որևէ պարտիա, նշում է, որ սխալը կատարվել է ինտուիտիվ կերպով կամ խնդրի լուծումը ցույց է տալիս շախմատային ինտուիցիայի բարձր զարգացումը և այլն։ Ակնհայտ է, որ շախմատիստի ինտուիցիայի պրոբլեմին ինչպես շախմատիստ պրակտիկները, այնպես էլ տեսաբանները տալիս են սկզբունքային նշանակություն։*

Արդեն շախմատիստների կողմից ինտուիցիային այսպիսի նշանակություն տալը խոսում է այն մասին, որ շախմատում ինտուիցիայի էության բացահայտումը ունի ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ կարևոր նշանակություն։ Ի դեպ, ինչպես հայտնի է, այժմ շախմատային մտքի և կիբեռնետիկական գիտության շատ ներկայացուցիչներ աշխատում են ստեղծել շախմատային մտածողության մոդելը, որի միջոցով և լուծել իմացաբանական մի շարք կարևոր հարցեր։ Նման մոդելի ստեղծման նախադրյալներից մեկը շախմատային ինտուիցիայի պրոբլեմի ճիշտ մեկնաբանումն է, ինչպես նաև շախմատային մտքի ձևականացումը։ Իսկ ձևականացնել հնարավոր է շախմատի ոչ բոլոր տարրերը։ Անհրաժեշտ է մասնավորապես պարզել, թե որ չափով է ինտուիցիան շախմատում ենթարկվում ձևականացման, ինչ հարաբերության մեջ են գտնվում վերջինիս ձևականացված և բովանդակային տարրերը և այլն։

Այս հարցի գիտական մեկնաբանման անհրաժեշտության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ ինտուիցիան իրոք լայն կիրառում ունի գիտության ու արվեստի բազմազան բնագավառներում։ Մենք հաճախ ենք խոսում իրավաբանական ինտուիցիայի, մաթեմատիկական ինտուիցիայի և տարբեր այլ բնույթի ինտուիցիաների մասին։ Շախմատում ինտուիցիայի հարցի քննարկումը, ճիշտ լուծումը իր հերթին կարող է նպաստել այլ բնագավառներում ևս

---

[1] Эм. Ласкер, Мой матч с Капабланкой, Л., 1925, стр. 55.
[2] Эм. Ласкер, Учебник шахматной игры, М., 1937, стр. 130.
[3] А. С. Суэтин, Середина игры в шахматной партии, Минск, 1961, стр. 36.

ինտուիցիայի բնույթի բացահայտմանը։ Ուշադրություն դարձնենք վերջապես մի կարևոր հանգամանքի վրա ևս։ Հայտնի է, որ ինտուիցիան ունի նաև ընդհանուր փիլիսոփայական նշանակություն։ Փիլիսոփայության պատմությունը ցույց է տալիս, որ շատ փիլիսոփաներ վիճաբանել են այն հարցի շուրջը, թե ի՞նչ է իրենից ներկայացնում ինտուիցիան, որի էությունը շատ բանով անմիջականորեն հարաբերվել է փիլիսոփայության հիմնական հարցին, մասնավորապես իմացության պրոցեսում ենթագիտակցականի դերին ու նշանակությանը։

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ ինտուիցիան կարելի է քննարկել առնվազն երեք տեսանկյունից՝ կոնկրետ շախմատային, ընդհանուր գիտական և, վերջապես, իմացաբանական-փիլիսոփայական, աշխարհայացքային նկատառումով։

Մի քանի խոսք հարցի վերջին տեսանկյան մասին։ Փիլիսոփայության պատմությունը ցույց է տալիս, որ ինտուիցիան այն պրոբլեմն է, որի շուրջը մղվող պայքարի արձագանքները մինչև հիմա էլ դեռ չեն լռել։ Ավելին, ժամանակակից փիլիսոփայական-իմացաբանական հոսանքները իրենց վիճաբանության հիմնական նյութը հաճախ դարձնում են ինտուիցիան։ Եթե վերանանք այդ վիճաբանությունների մանրամասներից, ապա կնկատենք երկու հիմնական տենդենց այս հարցի մեկնաբանությունում՝ իդեալիստական և մատերիալիստական։ Իդեալիզմի ներկայացուցիչները ինտուիցիան ի վերջո հանգեցնում են միստիկականին, գերբնականին։ Ըստ էության օգտվելով այն բանից, որ ինտուիցիայի հոգեբանական կառուցվածքը, անգամ իմացաբանական արմատները մատերիալիզմի տեսակետից դեռևս իրենց բավարար լուծումը չեն գտել, իդեալիզմը իր հենարանը շատ որոշակի իմաստով տեսնում է ինտուիցիայի յուրահատուկ մեկնաբանման մեջ։ Բավական է հիշել Բերգսոնի դրույթն այն մասին, որ ենթագիտակցականը ստեղծագործության նախադրյալն է։ Իմացաբանական տեսակետից ինտուիցիայի նման մեկնաբանման հնարավորությունը հիմնվում է այն բանի վրա, որ դիսկուրսիվ մտածողության պրոցեսում մենք առայժմ չենք կարող ցույց տալ ինտուիցիայի բացահայտ դրսևորման, արտահայտման եղանակները։

Մատերիալիզմը ելնում է այն բանից, որ ինտուիցիան իր մեջ չի պարունակում ոչինչ գերբնական, որ ճիշտ ըմբռնված ինտուիցիան ցույց է տալիս անմիջական իմացության սերտ հարաբերությունը իմացության այլ ձևերի հետ, ինտուիցիայի կապը տրամաբանության, ինչպես և հասարակական պրակտիկայի հետ։ Ինտուիցիայի պրոբլեմի ընդհանուր փիլիսոփայական, մատերիալիստական ճիշտ լուծումը ընթերցողը կարող է գտնել պրոֆեսոր Ասմուսի հետազոտություններում[5]։ Ներկա դեպքում ուշադրություն դարձնենք այն հան-

---

[4] *Տե՛ս* А. Бергсон, Творческая эволюция, М.—СПб, 1914; Т. И. Хилл, Современные теории познания, М., «Прогресс», 1965; М. Бунге, Интуиция и наука, М., «Прогресс», 1967; G. Santayana, Scepticism and Animal Faith, New York; Charles Scribner's Sons, 1923; S. Alexander Space, Time and Deity, London: Macmillan and Co., LTD., 1920; A. C. Ewing, Reason and Intuition, London: Humphrey Millord, 1941; A. Pap, The Philosophical Analysis of Natural Language, „Methodos", 1949, № 1, J. Passmore A., Hundred Years of Philosophy, London, Gerald Duckworth and Co. LTD., 1966 *և այլն։*

[5] *Տե՛ս հատկապես* В. Ф. Асмус, Проблема интуиции в философии и математике, М., Соцэкгиз, 1963.

դամանքի վրա, որ որոշ տեսաբաններ, անալոգիայի կարգով դիմելով շախմատին, ինտուիցիայի հարցում հանգում են սխալ ընդհանրացումների։ Անրի Պուանկարեն «Մաթեմատիկական հայտնագործությունները» հոդվածում, համեմատելով մաթեմատիկան շախմատի հետ, ի վերջո հանգում է այն եզրակացության, որ ինտուիցիան, «ենթագիտակցական ետը» մաթեմատիկական հայտնագործությունների աղբյուրն է, որ գիտակցականի համեմատությամբ ենթագիտակցականը մտածողության բարձրագույն ձևն է[6]։

Վերը նշվեց, թե շախմատիստները ինչ կարևոր դեր են հատկացնում ինտուիցիային շախմատային ստեղծագործությունում։ Վերջին շրջանում այդ պրոբլեմը ստանում է նաև ընդհանուր գիտական նշանակություն։ Ընդգծելով ինտուիցիայի դերը մաթեմատիկայում և շախմատում, ակադեմիկոս Վ. Ն. Գլուշկովը այն թեզն է զարգացնում, թե մաթեմատիկական խնդիրների, ապացուցումների մոդելականացման դեպքում շատ ավելի հեշտ է վերարտադրել տրամաբանական գործողությունները և անհամեմատ դժվար՝ իմացության ինտուիտիվ ձևերը։

Շախմատային մտածողության մեքենական մոդելն ստեղծելու հարցում չափազանց կարևոր նշանակություն ունի այն խնդիրը, թե կարելի՞ է արդյոք ձևականացնել ինտուիցիան, և եթե այո, ապա ի՞նչ չափով։ Այս հարցում ժամանակակից տրամաբանական գրականության մեջ տարբեր տեսակետներ գոյություն ունեն։ Տեսակետներից մեկի համաձայն, ինտուիցիան ենթարկվում է ձևական տրամաբանական վերլուծության, որը հնարավորություն է տալիս այն ներկայացնել ալգորիթմական եղանակով։ Այս մտահղացման կողմնակիցները նշում են. եթե մենք պնդենք, թե ինտուիցիան հնարավոր չէ ալգորիթմական ձևով ներկայացնել, ապա այդ պնդումը համարժեք է այն բանին, որ մարդկային մտածական գործունեության մեջ կան որոշ եղանակներ, որոնք չեն ենթարկվում ոչ մի ներքին օրինաչափության։ Այս տեսակետի համաձայն, ինտուիցիան իրոք և վերջին հաշվով իմացության պրոցեսում քանակական փոփոխությունների վերածումն է որակական փոփոխությունների։ Այդ անցումը պայմանավորված է գիտելիքների նախնական կուտակումով։ Վերջինս ունի իր տրամաբանական օրենքները, որոնք հնարավորություն են տալիս ինտուիցիայի նկատմամբ կիրառել ձևական տրամաբանության մեթոդը և նրա որոշ կողմերը ենթարկել ձևականացման։ Ահա թե ինչու այս տեսակետի կողմնակիցները վճռականորեն դեմ են արտահայտվում այն բանին, թե ինտուիցիան իռացիոնալ բնույթ ունի։ Ինտուիցիան իմացության բարդ ձև է, որտեղ միահյուսվում են ինչպես ձևական, այնպես էլ ոչ ձևական մոմենտներ, ինչպես ձևական տրամաբանական կառուցվածքների, այնպես էլ բովանդակային տրամաբանական-մտածողության որոշ առանձնահատկությունները։ Պրոբլեմի բարդությունը պայմանավորված է նաև այն բանով, որ ինտուիցիային միահյուսվում են ոչ միայն իմացական գործունեության տարբեր տարրեր, այլև միևնույն ժամանակ այդ բարդ ձևերը հանդես են գալիս ոչ թե ամբողջությամբ, այլ կրճատ տեսքով։

Որպես օրենք ինտուիցիային դիմում են այն դեպքում, երբ այս կամ այն իմաստով ժամանակը սահմանափակ է։ Երբ շախմատիստը ինտուիտիվ ձևով

---

6 Տե՛ս «Математики о математике», М., «Знание», 1967.

7 Տե՛ս օրինակ, «Логика научного исследования», под ред. Копнина и М. В. Поповича, М., «Наука», 1965, стр. 226—227.

որոշում է, թե որ քայլը կատարել, ապա նա այդ որոշման դիմում է այն դեպքում, երբ քայլերի հաշվի համար բավարար ժամանակ չունի, հնարավորություն չունի լրիվ կատարելու տրամաբանական անհրաժեշտ չափով ծավալուն գործողություններ։ Ընդ որում որոշակի իմաստով կարելի է պնդել, որ ժամանակի գործոնով ինտուիցիան պայմանավորելը բնորոշ է ոչ միայն շախմատին։ Սակավ չեն այն դեպքերը, երբ իրավաբանը առանց համապատասխան փաստերի առկայության ինտուիտիվ ձևով հանգում է այս կամ այն եզրակացության։ Ասենք, չնայած իր ձեռքի տակ ունեցած փաստերը խոսում են մեղադրյալի դեմ, սակայն նա ինտուիտիվ եղանակով հանգում է այն եզրակացության, որ մեղադրյալը հանցագործ չէ։ Կարելի է ասել, թե տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե ժամանակի պակասի, այլ փաստերի պակասի հետ։ Չէ՞ որ միայն փաստերի պակասն է, որ ստիպում է իրավաբանին դիմելու ինտուիտիվ եզրակացության։ Սակայն հարցն ավելի բարդ է։ Այդ միայն առաջին հայացքից է թվում, թե այստեղ տարբերությունն այն է, որ շախմատիստի մոտ բացակայում է ժամանակը, իսկ փաստաբանի մոտ՝ համապատասխան փաստերի քանակը։ Ըստ էության վերջին հաշվով իրավաբանը համապատասխան ժամանակի առկայության դեպքում կունենար բոլոր այն փաստերը, որոնք կհաստատեին նրա ինտուիտիվ եզրակացությունները։ Եթե ժամանակը հնարավորություն տար, ապա հետաքննությունը կհանգեցվեր փաստերի լրիվ բացահայտմանը և, հետևաբար, նրա ինտուիտիվ եզրակացության լրիվ տրամաբանական ապացուցմանը։ Այսպիսով, հանգում ենք այն եզրակացության, որ բոլոր դեպքերում ինտուիտիվ մտածելակերպին, ինտուիտիվ իմացության մենք դիմում ենք ժամանակի սղության պատճառով։ Պատահական չէ այն հանգամանքը, որ մասնավորապես շախմատում ինտուիտիվ ձևով են հարցերը լուծվում, հատկապես երբ շախմատիստը գտնվում է ցեյտնոտի մեջ։

Ինչպես արդեն նշվեց վերը, ընդհանուր իմացական, տրամաբանական բնույթի տեսակետից ինտուիցիան մտածողության բարդ-կրճատված ձև է։ Ինտուիցիայում բացակայում են տրամաբանական կշռադատության որոշ անհրաժեշտ օղակները։ Մոտավորապես կարելի է ասել, թե այստեղ տեղի ունի այն, ինչ ձևական տրամաբանությունից հայտնի է էնտիմեմա անունով։ Ինտուիցիայի դեպքում բացակայում են բարդ մտահանգման որոշ նախադրյալները, կշռադատության որոշ անհրաժեշտ տարրեր։ Ահա թե ինչու ինտուիցիան կարելի է բնութագրել նաև որպես թաքնված դիտելիք, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տրամաբանական կառուցվածքի տեսակետից ինտուիցիայում գիտելիքների ոչ բոլոր օղակներն են բացահայտ ձևով հանդես գալիս։

Իհարկե, հնարավորության դեպքում կարելի է և պետք է դիմել ոչ թե ինտուիտիվ եզրակացությունների, այլ անհրաժեշտ հաշվումների, կշռադատումների, տրամաբանական ապացուցման։ Այս տեսակետից բնորոշ է Լասկերի այն դիտողությունը, թե Կապաբլանկայի ոճը դարմացնում է իր տրամաբանությամբ։ Այնուհետև ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ ինտուիցիան համարվել է հանճարների բնածին հատկությունը, Լասկերը նշում է, թե այնտեղ, որտեղ հնարավոր էր, Կապաբլանկան աշխատում էր զսպել իր ֆանտազիան, չդիմել ֆանտազիային ու ինտուիցիային, քանի որ, ինչպես գրում է Լասկերը, այդ դեպքում սխալի հավանականությունը ավելի մեծ է[8].

---

[8] Տե՛ս Էմ. Ласкер, Мой матч с Капабланкой, стр. 54—55.

Այստեղից պետք է հանգել հետևյալ եզրակացության. այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է դիմել ստույգ տրամաբանական վերլուծությանը, պետք է դիմել այդ մեթոդին և ոչ թե ինտուիցիայի կամ իմացության կրճատ ձևին։

Ինտուիցիան որպես իմացական գործողություն իր մեջ պարունակում է մի շարք տարրեր։ Նշենք դրանցից մի քանի կարևորները։

Նախ և առաջ ինտուիցիան կապված է անցյալի փորձի հետ։ Բոլոր հավասար պայմանների դեպքում ինտուիտիվ մտածելակերպը, ինտուիտիվ իմացակերպը, հարցերի ինտուիտիվ լուծումը շատ ավելի զարգացած է այն շախմատիստի մոտ, որն ունի հարուստ կենսափորձ, նշանակալից աշխատանքային փորձ իմացության տվյալ բնագավառում։ Փորձը աշխատանքային հմտություններն են, որ հնարավորություն են տալիս ապացուցման ընթացքում բաց թողնել կշռադատության որոշ տրամաբանական օղակներ և անմիջապես հանգել ճշմարիտ եզրակացության։

Այն հանգամանքը, որ ինտուիցիան կապված է անցյալի փորձի հետ, ընդունում են շատ շախմատիստներ։ Պետք է ճշմարիտ համարել այն եզրակացությունը, թե ինտուիցիան ըստ էության անցյալի փորձի վերակերպարանացված գիտելիքն է։ Սահմանափակված լինելով ժամանակային գործոններով, շախմատիստը երբեմն ստիպված է խնդրի բազմաթիվ հնարավոր լուծումներից ընտրել որևէ մեկը, և այդ պետք է կատարվի ինտուիտիվ ձևով։ Անցյալի փորձն է նրան հուշում, թե այդ հնարավոր տարբերակներից ո՞րի ընտրության դեպքում նա կարող է ավելի ճիշտ եզրակացությունների հանգել։

Հարցի նման մեկնաբանումն ունի նաև կարևոր աշխարհայացքային նշանակություն։ Եթե ինտուիտիվ գիտելիքները կապված են անցյալի փորձի հետ, ապա դրանով իսկ ժխտվում է իդեալիստական այն թեզը, թե ինտուիցիան ինչոր բնածին ունակություն է, միստիկական բնույթ ունի և այլն։ Իրականում, նորից ընդգծենք շախմատային պրակտիկան վկայում է, որ անցյալի փորձն է, որ հնարավորություն է տալիս այսպես կոչված թաքնված գիտելիքները վերածելու տրամաբանական եզրակացության։

Այս տեսակետը հաստատվում է մարդկային կենսափորձի այլ բնագավառների օրինակով ևս։ Հաճախ են վկայակոչում Նապոլեոնին, որը ոչ թե նստում որոշում էր, թե վաղը զորքերը կշարժի այս կամ այն ուղղությամբ, այլ միշտ զգալի նախապատրաստական աշխատանք էր կատարում։ Նապոլեոնը սիրում էր ասել, որ ինքը մտածում է, խորհում բոլոր պայմաններում, բոլոր վիճակներում, լինի աշխատանքի ժամին, թե թատրոնում, լինի գիշերը, թե ցերեկը։ Ու երբ նա որևէ եզրակացության էր հանգում, և անգամ եթե այն հանկարծակի բնույթ ուներ, ապա այդ եզրակացությունը նույնպես ամբողջովին հիմնվում էր նրա կենսափորձի վրա։

Այսպիսով, շախմատային հմտությունը, կենսափորձը, աշխարհայացքը խոշոր նշանակություն ունեն հարցերի ինտուիտիվ լուծման խնդրում։

Ինտուիցիայի տրամաբանական իմաստը ըմբռնելու տեսանկյունից կարևոր է այն, որ ինտուիցիան շատ հաճախ հենվում է անալոգիայի վրա։ Սակավ չեն այն դեպքերը շախմատում, երբ մենք այս կամ այն քայլը կատարելիս, այս կամ այն որոշումը ինտուիտիվորեն ընդունելիս աշխատում ենք անմիջապես հիշել այն իրավիճակները, երբ նույն պայմաններում ենք գտնվելիս եղել, և համեմատելով տվյալ իրավիճակը մի շարք համանման իրավիճակների հետ, գտնելով համապատասխան դիրքային նմանությունները, առանց վերլուծելու

քննարկվող դիրքի կառուցվածքը և առանձնահատկությունները, չկատարելով բոլոր անհրաժեշտ հաշիվները, վճիռ ենք կայացնում ըստ անալոգիայի։

Ուրեմն, ինտուիտիվ եզրակացությունների դիմելիս մենք օգտվում ենք անալոգիայից այն դեպքում, երբ շախմատային տվյալ դիրքը իր արտաքին ձևավորման տեսակետից ունի մի շարք բնորոշ նմանություններ նախորդ փորձից հայտնի դիրքերի հետ։ Հատուկ ուշադրություն դարձնենք հետևյալի վրա. երբ տվյալ դեպքում նշում ենք, որ քննարկվող շախմատային դիրքը իր արտաքին հատկություններով նման է նախորդ փորձից հայտնի որևէ շախմատային վիճակին, ապա այս «արտաքինը» չպետք է հասկանալ ոչ էական հատկությունների տեսակետից։ Անալոգիան ուսումնասիրող տրամաբանությունը գտնում է, որ անալոգիայի կարելի է դիմել այն դեպքում, երբ երկու համեմատվող առարկաներ ունեն մի շարք նման էական հատկություններ և որքան շատ է էական հատկությունների քանակը, այնքան բարձր է ստացված եզրակացության հավանականության աստիճանը։ Տվյալ դեպքում, երբ ասում ենք, թե շախմատային երկու իրավիճակների, դիրքավիճակների արտաքին նմանությունները հնարավորություն են տալիս դիմելու անալոգիայի, ապա նկատի ունենք շախմատային ֆիգուրների քանակը, նրանց գրաված դիրքը, փոխհարաբերությունը խաղընկերոջ ֆիգուրների հետ և նման կարգի այլ հատկություններ։ Այս հատկությունները աչքի են ընկնում, և միայն այդ պատճառով ենք խոսում դիրքի «արտաքին ձևավորման մասին»։ Այդ վերջինս շախմատային դիրքի գնահատման տեսակետից անպայման ունի կարևոր նշանակություն։ Դիրքի «արտաքին ձևավորումը», վիճակի ակնառու լինելը չպետք է երբեք համարել ոչ էական, ոչ բնորոշ շախմատային պարտիայի համար։

Շախմատում ինտուիցիան հանդես է գալիս նաև, երբ անալոգիա կատարելիս չենք նկատում երկու դիրքերի վերը նշված նմանությունները։ Մենք անալոգիայի կարող ենք դիմել այն դեպքում, երբ չնայած դիրքերը իրենց արտաքին գծագրման և նյութական հատկանիշների իմաստով նմանություններ չունեն, բայց նման է այս դիրքերի ներքին տրամաբանական կառուցվածքը։ Պետք է ասել, որ այս վերջին դեպքում անալոգիայի միջոցով կատարված ինտուիտիվ եզրակացության հավանականության աստիճանը թերևս ավելի բարձր է, քան թե առաջին դեպքում, որովհետև բոլոր հավասար պայմաններում ներքին տրամաբանական օրինաչափությունների նմանությունը, տրամաբանական կառուցվածքի նմանությունը շատ ավելի էական է քննարկվող հարցերի համար, քան միայն ֆիգուրների քանակական նմանությունը, ֆիգուրների դասավորությունը և նման կարգի այլ գործոններ։

Չպետք է ենթադրել, թե երբ մի դեպքում խոսում ենք ինտուիտիվ եզրակացության պրոցեսում անցյալի կենսափորձի նշանակության մասին, մի այլ դեպքում՝ անալոգիայի դերի մասին, ապա այս երկու տարրերը ինչ-որ ինքնուրույն տարրեր են և նրանց միջև չկան հատման կետեր։ Խոսելով ինտուիտիվ եզրակացության պրոցեսում փորձի դերի մասին, մենք նկատի ունենք ինտուիցիայի իմացաբանական բովանդակությունը։ Իսկ երբ ինտուիտիվ եզրակացության պրոցեսում նշում ենք անալոգիայի դերը, ապա նկատի ունենք ինտուիցիան իր տրամաբանական կառուցվածքի տեսակետից։ Միևնույն ժամանակ պետք է նկատել իմացաբանականի և տրամաբանականի միասնությունը այս հարցում։ Անալոգիայի կարելի է դիմել այն դեպքում. երբ մարդն ունի

հարուստ կենսափորձ, գիտելիքներ, լայն մտահորիզոն, ճանաչողության մեծ հնարավորություններ։

Ինտուիտիվ եզրակացության հանգելու համար անհրաժեշտ են նաև այլ գործոններ։ Վերը ցույց տրվեց, որ, հավասար պայմանների դեպքում, ինտուիտիվ իմացությունը զարգացած է այն շախմատիստի մոտ, որն ավելի շատ կենսափորձ, ավելի լայն մտահորիզոն, ավելի խոր գիտելիքներ ունի։ Բայց այստեղ պետք է նշել «հավասար պայմանների» դեպքում, որովհետև կան նաև այլ գործոններ, որոնք իրենց դրոշմն են թողնում ինտուիցիայի վրա։ Բանն այն է, որ, ինչպես վերը նշվեց, ինտուիցիան մենք համարում ենք բարդ իմացական գործողություն, որտեղ տրամաբանական տեսակետից բաց են թողնված որոշ նախադրյալներ, մի շարք անհրաժեշտ օղակներ և երբեմն սուղ նախադրրյալներից անմիջականորեն բխեցվում է համապատասխան եզրակացություն։ Տրամաբանական տեսակետից դա ցույց է տալիս, որ ինտուիցիայի մեջ մեծ նշանակություն ունի վերացարկման, ընդհանրացման տրամաբանական կարողությունը, և ընդհանրապես տրամաբանական մտածելակերպի զարգացման աստիճանը, որովհետև այլ հավասար պայմանների դեպքում ճշմարիտ եզրակացության հանգել կարող է նա, ում տրամաբանական մտածելակերպը գտնվում է զարգացման ավելի բարձր աստիճանի վրա։ Աբստրակտ մտածողությունը, տրամաբանական իմացությունն է հնարավորություն տալիս ժամանակի տեսակետից սուղ պայմաններում վերանալ մի շարք ոչ-էական հատկություններից, ամրագրել տվյալ դիրքի համար կարևոր էական հատկությունները և կատարել ճիշտ անալոգիաներ, ճիշտ ընդհանրացնել անցյալի փորձը և այս բոլորի հիման վրա ոչ լրիվ նախադրյալներից հանգել ճշմարիտ եզրակացության այն դեպքում, երբ, ասենք, հնարավորություն չկա նկատելու նախադրրյալների միջև հետևողական և ընդարձակ ձևով մեկնաբանված տրամաբանական կառուցվածքներ։

Ինտուիցիայի պրոբլեմի բարդությունը գիտության մեջ ընդունված փաստ է։ Այստեղ կանգ առանք հարցի միայն տրամաբանական կողմի որոշ լուսաբանման վրա։ Ինտուիցիան շատ ավելի լայն ընդգրկումներ ունի։ Տրամաբանական ու փիլիսոփայական մոմենտներից բացի, կարևոր է նաև ինտուիցիայի հոգեբանական բնույթը, ֆիզիոլոգիական էությունը և այլն։ Իհարկե, հարցի միայն բազմակողմանի քննարկումը կարող է որոշ իմաստով օգնել ինտուիցիայի պրոբլեմի լուծմանը։ Տվյալ դեպքում, քանի որ շախմատային և կիբեռնետիկական դրականության մեջ այժմ առաջադրվում է շախմատային մտածողության մեքենական մոդելի ստեղծման խնդիրը, մենք այդ նպատակին կարող ենք հասնել, եթե ցույց տրվի շախմատային իմացության, շախմատային մտքի տրամաբանական կառուցվածքը։ Որովհետև այն, ինչ չի ենթարկվում տրամաբանական հետազոտության, չի կարող ձևականացվել։ Միևնույն ժամանակ մենք հանգում ենք այն եզրակացության, որ շախմատային մտածելակերպի մեջ ամենաբարդ հանգուցային հարցերից մեկի՝ ինտուիտիվ մտածելակերպի, ինտուիտիվ իմացակերպի բնույթը հետազոտելիս կարելի է բովանդակային տարրերը տարբերակել ոչ-բովանդակային, ձևական տարրերից և վերջիններս ենթարկել տրամաբանական վերլուծության, որ և հնարավորություն կընձեռի որոշակի իմաստով ստեղծելու ինտուիցիայի, թեև ոչ ամբողջական, բայց, այնուամենայնիվ, հնարավոր ձևականացումը ժամանակակից տրամաբանական-մեթոդոլոգիական ապարատի միջոցով։